

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 11—12

ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԿԸ. ՏԱՐԻ 1954

## Կ Ց Ո Ւ Ր Դ Ք Ս. Ե Փ Ր Ե Մ Ի Խ Ո Ր Ի Ն Ա Ս Ո Ր Ի Ո Յ Կ Ց Ո Ւ Ր Դ Ք Ր.

ԵՐՐՈՐԴ ԳԻՇԵՐՈՅ ԿՑՈՒՐԴ  
ԳՈՀԱՍՑԻՆ ԶՔԵՆ ՀՍԿԵՑՈՂՔ, ՈՐՔ ԱՐԺԱՆԻ ԵՂԵՆ ԼԻՆԵԼ ԸՆԿԵՐ  
ՍՐԲՈՅ ՍՐՈՎԲԵՒՅ

Մի տայք իշխանութիւն քնոյ թագաւորել յանդամս ձեր.  
 1 լուարուք զաղէտան զոր ինչ գործեաց ի յերկրի.  
 քասքնեցէք եւ փախերուք ի նմանէ:  
 Կողոպտեցաւ ի քուն Ադամ,  
 5 կողիւն որ առաւ ի նմանէ.  
 յարթնութեանն մի էր. իբրեւ ննջեաց,  
 բարժանեցաւ եւ եղեւ յերկուս.  
 Նոյ ծանր այլանեցաւ քնոյն, որ ծնաւ ի նմանէ.  
 10 յարթնութեանն զգաստ էր եւ պարկեշտ.  
 ի քունն իւրում մերկացաւ եւ առակեցաւ:  
 Ղովտ դարձեալ ի ձեռն քնոյ իւրոյ  
 կողոպտեցաւ եւ ոչ զգաց:  
 Մեծացան արթունք ի վանձէ նորա.  
 եւ եղեն յազգս ի սերմանէ նորա.  
 15 Ձի թէ ընդ արդարսն զայս գործեաց քուն  
 եւ ոչ զգացին ի գողանալն զնոսա,  
 քանի՛ եւս երկիցուք մեք մեղաւորք ի քնոյ  
 զի մի տիրեսցէ մեզ:  
 Ի քուն մեռան անգրանիկքն Նգիպտոսի,  
 եւ ոչ զգաց թշուառականն այն.  
 20 բայց իբրեւ զարթեաւ եւ յարեաւ,  
 ապա զգաց հարուածին իւրում:

268

Խորագիրն՝ Հունի կցուրդ ժբ: — կցուրդ: — սրբոց դժուարընթեմիլի: C վան քնոյ եւ  
 արթնութեան: C = Տղ. էջ 15—19:  
 2 C գաղէտն. Հունի ինչ: — 4 C զի կողոպտեցաւ: — 6 A յարթնութեան: — 8 A ապա-  
 նեցաւ: — 9 A սգաստ: — 10 C Հունի իւրում: — 11 A գաւա: — 12 A սղաց: — 13 C ար-  
 թունքն: — 14 C յա. բազումս. Հունի ի ս. նորա: — 15 C եթէ. արդարս: — 16 A՛ սղացին  
 C գողանալ: — 17 C մեղաւորքս: — 20, 22 A սղաց: —



837-73

Միտարա, որ հսկայութեամբն իւրով ջարդեաց զազգն Երրայեցուց,  
 25 որչափ մեծացաւ յարթնութեան իւրում,  
 նոյնչափ տկարացաւ ի ձեռն քնոյ.  
 զի Յայէլ յարեաւ ի վերայ եւ վարեաց ցից ընդ ծամելիս նորա.  
 քուն ի նախատինս արար զնա,  
 զի ի ձեռն կնոջ սպան զնա:  
 Սամփսոն ուխտաւոր, որ յորովայնէ զգեցեալ էր զհսկայութիւն.  
 30 որ այրեաց զՓղիշա,  
 ի ձեռն կնոջ կուրացուցին Փղշտացիք զաչս նորա.  
 նա որ սպան գառիւծն այն եւ աղուեսուք այրեաց զՓղիշա,  
 քուն նենգեաց եւ եգերծ զնա,  
 եւ ի տուէ ընդ երկանս կապեաց զնա:  
 35 Գիշերի Մադիամ աւարեցաւ արթնովքն,  
 որք էին ընդ Գեղէոնի.  
 ի ձայն փողոցն ընդոստեաւ եւ զարթեաւ,  
 յարեաւ եւ ընդ սուր եհան զանձն իւր.  
 ոչ շաղախեցան ձեռք արթնոցն  
 40 յարիւն ծանրարթուն քնէածիցն.  
 Ջահիւք եւ բարբառովք արթնոյն,  
 պղծեցաւ յարիւն անձին իւրոյ:  
 Գեղէոն հսկուն էր յաղաւթս,  
 եւ զՄադիամ երազքն սահէին.  
 45 մարգարէացան նմա յաղթութիւն,  
 եւ պատահեաց նմա պարտութիւն:  
 Կողոպտեցաւ ի քուն Շաւուզ,  
 զի կորոյս գտաուն լողկի իւրոյ,  
 ի ձեռն տանոյն զոր եհատ,  
 50 առ զթագաւորութիւնն ի նմանէ.  
 եւ զի ոչ քասքնեաց նա յայնմանէ,  
 եւ յաւել միւսանգամ ննջեաց.  
 մերկ մնաց ի գինուէ իւրմէ,  
 զի առաւ ի նմանէ արդնատէզն իւր.  
 55 զկեանս որ յեա քնոյն  
 չնորհաւ ետ նմա Դաւիթ,  
 զի յայնմ քնոյ որ յայրի անդ,  
 քուն յաւիտենից ննջեաց նա:  
 եւ զի հայհոյեաց Ռափսակ եւ ննջեաց,  
 60 կոտորեաց հրեշտակ զգաւրս նորա.

22 C սկայութեամբ: — 25 A հարաւ. C (ի վերայ) նորա. չունի ծ. նորա: — 26 C չունի ի: — 28 C ուխտաւորն: — 29 C ի ձեռն կնոջ որ: — 30 C չունի ի ձեռն կնոջ: A վղիշտացիք: — 31 C չունի որ... այն: C աղուէսոքն: — 32 C քունն: — 34 C արթունքն: — 36 C փողոցն: — 40 C արթնոյն: — 42 A գեղէոն: — 44 C յաղթութիւնք: — 45 C նոցա: — 47 C լողկի: — 48 C զի ի ձ. տանոյ. A էհատ: — 49 C տանն: — 50 C չունի զի: — 53 C զկեանս տէզն: — 54 A զկեանս. C եւ զկեանսն. քնոյ: — 56 C յայն: — 59 C հրեշտակն.

273 ..

եւ սերմն զոր սերմանեաց ի տուէ,  
 հնձեաց ի գիշերին.  
 ահա Ռափսակ ննջէր ի գահոյս իւր,  
 եւ Եղեկիա արթուն էր յաղաւթս.  
 65 եւ էջ զուարթուն յաղաւթս արթնոյն  
 եւ կոտորեաց զբանակս ննջեցելոցն.  
 Սիոն լի էր աղաւթիւք,  
 եւ բանակն Ասորեստանի մեռելովք.  
 հսկեցողքն զքնէածան որ հայհոյեցին,  
 70 ննջեցուցին ի քուն յաւիտենից:  
 Ի գիշերի աւարեցաւ Բարեյ ի Մարաց,  
 որք հսկուն էին.  
 քուն ի մահ մատնեաց  
 զհոյակապն ընդ ամենայն երկիր.  
 75 Զի այն որ ննջէն հանդերձ արթնովք  
 մի են եւ չեն մի նոքա.  
 հանգիստ քնոյ ոչ կայ մնայ.  
 եւ պահեալ է հատուցումն աղաւթից:  
 Այս վաստակ որ յանդամս մեր,  
 յաճախէ մեզ շահ ի բարձունս.  
 80 անցանէ վաստակս մեր,  
 եւ կայ մնայ վարձ մեր յաւիտեան:

Կ Յ Ո Ւ Ր Դ Ժ Գ.

ԶՈՐՐՈՐԴ ԳԻՇԵՐՈՅ ԿՅՈՒՐԴ  
 ԱՒՐԷՆԵԱԼ ՈՐ ԱՐԺԱՆԻ ԱՐԱՐ ԶՈՐԴԻՍ ԱԳԱՄԱՅ ՍԱՂՄՈՍԵԼ ԸՆԴ  
 ՀՐԵՇՏԱԿՍ

Երանի է հսկեցողաց, այնց որ յամենայն գիշերս  
 ընդգէմ քնոյ կարգեալ են:  
 Արթուն էր ի գուրն Դանիէլ  
 եւ հսկէին ընդ նմա զազանքն.  
 5 Փոքր էր գիշերն զոհանալոյ  
 վասն փրկութեանն նորա եղև նմա:  
 Հալածեաց զքուն եւ Դարեհ,  
 աւտարացաւ եւ ի խորակաց.

274 ..

A գաւրս: C գիշերի: — 62 A ահատա Ռափսակ. C զի ուր: — 63 C եղեկիէլ: — 64 A չունի էջ: — 65 C եւ ստատակեաց: — 67 A մեռելովք: — 68 C հսկողքն որ ի քնէածիցն հայհոյէին: — 70 A ի գիշերի C գիշերաւ. C աւարեցաւ: — 71 C որ հսկայունքն էին: — 72 C քանզի ի մատնել հա: — 74 A ննջէն: — 76 A հանդերձ... կա մնայ: — 80 C վ. այս մեր: — 81 A կա մնայ C վարձան. չունի մեր: Խորագիրն՝ չունի կցուրդ ժԳ: պղամա: հրեշտակ: 1 հսկեցողաց: — 2 գարգէլ:

1°

Ոչ ետ հանդիստ մարմնոյ իւրոյ  
 10 վասն սիրոյն Դանիէլի:  
 Զժամանակն այն որ պահեաց Դանիէլ  
 ի խորտկաց թագաւորութեանն.  
 Պարկեշտ էր յամենայն ժամս իւր,  
 զի արթուն էր յամենայն ժամս իւր.  
 15 Հալածեաց զքունս ի բբաց իւրոց,  
 զի աղաչեսցէ զԱստուած իւր.  
 Զի նշանաւ եւ յայտնութեամբ խափանեսցին  
 նախատինք յազգէ նորա.  
 Հսկմամբ հաւանեցոյց զԱստուած,  
 20 զի ցուցցէ նմա զերազ թագաւորին.  
 Եւ հսկմամբ նորա եւ ընկերաց իւրոց  
 յայտնեաց նմա զերազն եւ զմեկնութիւնն իւր.  
 Մտին քաղղեայքն եւ կախարդքն եւ կորացան,  
 զի չեղեն հասու.  
 25 Եմուտ հսկեցողն եւ ասաց զերազն,  
 եւ ընդ երազոյն զմեկնութիւն նորա.  
 Զի զոր ինչ ետես թագաւորն,  
 իբրեւ ննջէր ի տան արքայութեան իւրոյ.  
 Աղաւթք հսկեցողացն ծագեցուցին  
 30 առաջի թագաւորին եւ ընկերաց իւրոց:  
 Հսկմամբ որ եղեւ մանկուոյն,  
 ապրեցան քաղղեայք ի նմանէ.  
 Զի հսկումն ծագեաց եւ յայտնեաց զերազն,  
 որ ծածկեցաւ ի կախարդացն:  
 35 Արթնութեամբ եւ պարկեշտութեամբ  
 զուարթնոց բարձանց նման էք զուք.  
 Եւ մարգարէից հալելուիւք ձերովք  
 եւ սրովքէից սրբութեամբք ձերովք.  
 Ժողովոյն որ աւրհնեաց յեփրաթա ի գիշերի  
 40 ի ծագման փրկչին մերոյ:  
 Ահա նմանեցին զունդք ձեր աւրհնութեան,  
 զոր որոտան բերանք ձեր:  
 Մոզքն որ զգացին զՄիածնի որդւոյն,  
 զի հալածեցին զքունս աչաց իւրեանց.  
 45 զամենայն գիշերս ընթանային  
 առաջնորդութեամբ աստեղն լուսաւորի:  
 Հսկեցին զգիշերն ողջոյն առաքեալքն  
 որսալ ձուկն եւ ոչ գտին.

15 չունի ի (բբաց): — 23 կախարդքն: — 25 հսկեցաւ: — 31 մանկուոյն: — 32 քաղ-  
 զայք: — 39 յեփրաթա:

յառաւաւտին խնդացին միտք նոցա  
 \* մեծ որսովք, զոր գտին նոքա:  
 50 Յաղաւթս աղաւ Տէրն մեր յերեկորեայ,  
 զի եղիցի աւրինակ հսկեցողացն:  
 Երանի է ձեզ, որ աշակերտեցայք այնմ վարդապետի,  
 որ ուսոյց զձեզ անդրանիկն.  
 55 Տէր է երկոցունց՝ արթնութեան եւ քնէածութեան.  
 Եթէ նա եկն յերկոսեան, որ վասն մեր են երկոքեան.  
 որպէս զի ննջեաց վասն մեր,  
 եւ հսկեաց նա դարձեալ վասն մեր:  
 Քնովք գուշակեաց վասն մարմնոյ իւրոյ,  
 60 եւ հսկմամբ հալածեաց զքնէածութիւնս մեր.  
 զի եկն յաշխարհ, որ հնազանդեալ է արթնութեան  
 եւ քնէածութեան, հնազանդեցաւ նա երկոցունց,  
 իբրեւ մերձ էր երկոցունց:  
 Զի թէ չէր լաւ հսկեցողութիւն, ոչ լինէր աւրինակ որդի,  
 65 առանց հսկման ոչ ոք կարէ աւտարանալ յամենայն չարեաց:  
 Աշակերտեսցուք նմա ուղիղ,  
 զի կատարեսցին ի մեզ կեանք նորա.  
 մի աշակերտեսցուք ձախողակի,  
 զի մի լինիցիմք քնէածք եւ ոչ հսկեցողք:  
 70 Որդի, որ ոչ էր կարաւտ հսկման,  
 եղեւ վասն մեր հսկեցող,  
 զէն գործեաց եւ ետ մեզ,  
 զի առաքինացի աշակերտութիւն մեր:

ԿՅՈՒՐԴ ԺԴ.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՇԵՐՈՅ ԿՅՈՒՐԴ  
 ԱԻՐՀՆՈՒԹԻԻՆ ՈՐԴԻՈՅ, ՈՐ ՈՒՐԱՆ ԱՌՆԵ ԶՀՍԿԵՑՈՂՍ ԾԱԳՄԱՄԲ  
 ԻԻՐՈՎ

Դաւիթ արքայ որ խորհեցաւ շինել տաճար Աստուծոյ,  
 ուխտեաց ուխտ ընտրողութեան,  
 զի մի տացէ քունս աչաց իւրոց.  
 հեռացաւ անձն իւր ի տանէ իւրմէ,  
 զի ետես նա, եթէ ի բաց լուծեալ էր տապանակն այն,  
 որ լի էր խորհրդովք Գրիստոսի:  
 5 Աւտարացաւ թագաւորն ի տանէ իւրմէ,  
 եւ յանկողնոց զահայից իւրոց.

56, 62 նայ: — 66 ուղիղ:  
 խորագիրն՝ չունի կցուրդ թի:

10 Եհար իւր խորան փոխանակ տան,  
 Եւ տարածեաց խորդ ի վերայ զեանոյ.  
 Եւ զի մի ծանրանայցէ մարմին իւր,  
 Ետ նմա կերակուր չափով:  
 20 Զրկեաց զանձն իւր յամենայնէ,  
 զի բաւական լիցի զուխտ իւր կատարել:  
 15 Ի տանէ եւ յանկողնոյ իւրոյ կարէր Դաւիթ աւտարանալ.  
 Խսկ ի քնոյ իւրմէ զիա՞րդ կարէր աւտարանալ:  
 Զտեղին կամէր գիտել նա,  
 Եւ զտաճարն շինել ցանկացեալ էր.  
 Եւ ուխտեաց ուխտ վասն այսորիկ,  
 20 Եւ սահմանեաց ի ձեռն երդմանն.  
 Երդուաւ Տեառն եւ ուխտեաց նմա,  
 ոչ տալ քուն աչաց իւրոց,  
 Եւ ոչ նիրհ արտեանաց իւրոց,  
 մինչեւ գտցէ զտեղի Տեառն:  
 25 Էջ նա ի մեծ խոնարհութիւն մինչեւ ետես զտեղին զայն.  
 Եւ ի ժամու, զի գիտաց զտեղին,  
 կատարեցաւ ուխտ բերանոյ նորա:  
 Ոչ կամեցաւ մատուցանել աւտար ինչ իրս, այլ ի տեղւոյն անտի.  
 Եւ ի նմին եւ ի նոյն տեղւոյ մատոյց որ ինչ գտաւ.  
 30 Ի նմին տեղւոջ զտանէին եզինք թագաւորին  
 Եւ չէր կարաւտ նա ի փայտէ.  
 փայտիւ եւ եզամբքն որ էին տեղւոյն,  
 մատուցանէր Տեառն տեղւոյն:  
 Եւ զի ուխտ էր սքանչելեաց, գործեաց ի նա Տէր առաւել իրս.  
 35 զի ի ձեռն հրոյ, որ ի բարձանց ընդունելի եղեւ պատարագ նորա.  
 զտեղին զոր խնդրեաց, եցոյց նմա.  
 Եւ զմահն խափանեաց յազգէ նորա:  
 Եւ չինել զտունն ընդէ՞ր ոչ ետ նմա.  
 մեծամեծս որ ոչ գործին, գործեաց առ նա Տէրն իւր բարերար.  
 40 Եւ զայն որ փոքր էր քան զամենայն՝  
 արգել զնա վասն յանցուածոցն.  
 Եւ զի՞նչ էր արգելք յանցուած նորա,  
 որ արգել զնա չինել զտունն.  
 Արիւն բազում հեղեր եւ չէ արժան, առէ,  
 45 Եթէ զու չինեսցես:  
 Արիւն առաջին Գողթագուն էր եւ զկնի նորա Ամաղեկացւոցն.  
 Եւ զոյն իսկ զայս ոչ առանց Աստուծոյ կոտորեաց զոսա.  
 Եւ յազգն յոր երթայր հինիւ, զնա հարցանէր եւ ապա ելանէր:

276

9 Էհար: — 10 վերա: — 11 ծանրայցէ. հմմտ. տող 62. «զի մի յաճախեաց ծանրու-  
 թիւն մարմնոյ Դաւիթ»: — 18 չինեալ: — 27 նորա: — 28—33 տեղւոյն, տեղոյ, տեղոջ: —  
 29 որ ինչ: — 42 արգելաւք: — 44 հեղէր:

Սակաւ է կոտորած նորա, քան զայնորիկ,  
 50 որ կոտորեաց զերեսուն եւ երկու թագաւորսն:  
 Արիւն յազգին իւրում ոչ եհեղ, բայց միայն զարիւնն Ուրիայ.  
 Իբրու ինքն Ուրիա քետացի էր եւ ոչ հերբայեցի:  
 Զնախատինս իւր ոչ պահանջեաց ի Նաբաւղայ.  
 քանզի ազաչեաց զնա Արիգէէ.  
 55 Եւ Շաւուղի արգահատեաց վասն Աստուծոյ եւ Յոփնաթանու,  
 այն որ զսպանողն իւր ապրեցոյց ի սպանմանէ արանցն,  
 որ ընդ նմա էին.  
 զիա՞րդ \* զորդիս ազգին իւրոյ անաւրինէր սպանանել ի նանիր.  
 միթէ արդեւք սոյն այս յանցուած եկաց մնաց մինչեւ ի Նաթան.  
 60 Եւ ելոյժ այսուրիկ զուխտն նորա, զի ասաց ցնա, թէ ոչ չինեսցես:  
 Բայց զի մի յաճախեացէ ծանրութիւն մարմնոյ Դաւիթի  
 Իբրեւ ծերացաւ,  
 ձգեաց զպատճառս զկնի նորա.  
 զի եղիցի ծերն ի հանգստեան:

269

Կ Յ Ո Ւ Ր Դ Ժ Ե .

ՎԵՅԵՐՈՐԴ ԳԻՇԵՐՈՅ ԿՑՈՒՐԴ  
 ԸՆԴԵ՛Ր ԽԱՓԱՆԵՑԱԻ Ի ՇԻՆԵԼՈՅ ԶՏՈՒՆՆ ԴԱԻԻԹ, ԵՒ ԵԹԷ ԶԻ ԱՐԻԻՆՍՍ  
 ԲԱԶՈՒՄՍ ԵՀԵՂ, ԱՐԳԵԼ ԶՆԱ

Թէ Դաւիթ որ կոտորեաց զազգս եւ չէր աւրէն չինել զտունն,  
 ամենայն որ կոտորեսցէ իբրու զնա, ընդ եպիրանաւք է  
 ըստ նմանութեան նորա:  
 5 Եթէ այդպէս է, ուրեմն Աբրահամ եպերեալ է,  
 որ կոտորեաց զհինգ թագաւորսն.  
 Եւ Մովսէս որ կոտորեաց զՄադիամ,  
 Եւ Յեշով որ կոտորեաց զՀնդիկս,  
 Եպերեալ է Ասմա, որ կոտորեաց զԱսորեստան,  
 Եւ Եզեկիա որ կոտորեաց զԱսորեստան,  
 Եւ Մակարայեցիքն որ կոտորեցին զՅաւան,  
 10 Եւ Զաւրաբարէլ, որ կոտորեաց զՄակեդոնիա:  
 Եւ թէ նոքա ոչ եպերին արեամբն,  
 զոր հեղին յազգաց անտի,  
 Ընդէ՞ր Դաւիթ միայն եպերի վասն այսորիկ:  
 15 Եթէ այլն եպերանաց են, ոչ թողոյր եթէ ոչ յիշէր.

49 նորա: — 50 եւ: — 53 ի Նաբաւղայ. այլուր Նաբաղ, Արիգեա. հմմտ. Ա. Թաղ.  
 Իե. 3 եւ այլն: — 58 ԲԳ. 267ա կ'աւարտի զեպրգ բառով, ԲԳ. 267բ կը սկսի իս ազգին.  
 պէտք է լրացնել < զորդ > իս: յանաւրինէր: — 59 արդեւք: յանցուած: — 64 հանգստեան:  
 Խորագիրին՝ չունի կցուրդ ժե: ունի լով վեցերորդ զիշերոյ: Խորագրիս մէջ առի ընդէ՞ր  
 — զնա, որ կարող է սկզբնաբար նաեւ կցուրդիս սկսուածքն ըլլալ: բազում:  
 7 յիշով: — 8 եզեկիա: — 15—16 կը բուրն յանգարուած ըլլալ:

Մովսիսի, զի մեծ է եպերանան, եւ բերէ զեպերանան վիմին.  
 Մովսէս կոտորեաց յիւր ազգէն եւ ոչ եպերեցաւ.  
 եւ ոչ Եղիա, որ իւրովք ձեռաւքն կոտորեաց  
 զմարգարէս Բահաղու:  
 20 Մովսէս որ կոտորեաց զՆերայեցիան,  
 շքեղացան փառաւք զէմք իւր.  
 եւ Եղիա, որ կոտորեաց զբուրման, վերացաւ կառաւք յերկինս.  
 Յահով որ կոտորեաց զմարգարէսն Բահաղու.  
 եւ զէն պաշտամանց ետ նմա,  
 25 զի չորս դարս կարգեաց ի թագն ի զաւակ նորա:  
 Դաւիթ, որ հաւասար է ընդ ընկերսն իւր,  
 ընդէ՞ր որոշեաց զնա յընկերաց իւրոց.  
 եւ թէ ոչ որոշեաց զնա,  
 ընդէ՞ր զրկեաց ի շինելոյ տաճարին:  
 30 Ընկերք իւր ընկալան զաւետիս. եւ նմա կարկառ սպանութիւնս.  
 Մովսէս գործեաց զվրան ժամուն, եւ զնա արգել ի տուն շինելոյ.  
 ոչ վասն ազգացն զրկեաց զնա, որ ի սուրբս համարեալ էին,  
 այլ ի վաստակոյ ուխտին խնայեաց զնա,  
 զի վաղվաղեացէ լուծցէ զուխան.  
 35 Եթէ ոչ էր նորա վաղվաղեալ յուխտել, նա շինէր զտաճարն.  
 ուխտն զոր ուխտեաց վասն տաճարին,  
 նա զրկեաց զնա ի շինելոյ:  
 Ուխտէր նա մեծ քան զկար իւր,  
 զի ոչ մտանիցէ նա ի տուն իւր.  
 40 եւ ոչ ելանիցէ նա յանկողինս իւր,  
 եւ ոչ տացէ քուն աչաց իւրոց:  
 Արդ զի մի լինիցի ի նեղութեան մինչ կատարեացէ զշինուածն,  
 յառաջ քան զսկսանել նորա ի շինուածն,  
 կատարեաց արգելմամբ զուխտ նորա.  
 45 շնորհս կամեցաւ առնել նմա ի դէմս երեսաց ստուգութեանն,  
 արգել զնա անուամբ եպերանաց\* իբրու հեռի է ի բամբասելոյ.  
 զի եթէ վասն եպերանաց արգելոյր զնա, զի մի շինեացէ,  
 զոյր նմա այն Ուրիայն, զի յիշեցուցէ նմա յայնմ ժամու.  
 բայց զի չէր ուրեք այն Ուրիայն զի յիշեացէ,  
 50 զի թողաւ ի ձեռն նախանայ.  
 Կանխեաց ի նա զեպերունն արդարոց,  
 որ պատեցան զնովաւ եւ ոչ են եպերեալ:  
 Այլ ընդ տաճարն եւ հողի սրբութեան առեալ,  
 55 փառաւորեալ հողոյն արժանի եղև,  
 շինելոյ տաճարին չէ՞ր արժանի:

23 Յահով, ըստ Եօթանամից Բարգամուրեան Յէու (Դ. Թագ. Ժ. 18—30), տե՛ս նաեւ  
 Եփրեմի Գ. — Դ. Բագաւորութեանց Մեկնութեան մէջ, էջ 456: — 26 ընդերսն: — 32 ի սուրբ:

Եւ թէ արդարեւ ասացաւ նմա,  
 ընդէ՞ր պահանջեաց ի նմանէ զայն ինչ,  
 որ ի միոյ ուրուք արդարոցն ոչ պահանջեցան.  
 եւ եթէ ամենայն արդարք որ կոտորեցին  
 60 ի ժողովրդենէն եւ յազգաց, ոչ են եպերեալք,  
 եւ ի՞րբ եպերեաց զԴաւիթ.  
 այլ երանելի եւ առանց եպերանաց է իբրեւ զընկերս իւր:

ԿՅՈՒՐԴ ԺԶ.

ԵԻԹՆԵՐՈՐԴ ԳԻՇԵՐՈՅ ԿՅՈՒՐԴ

.....  
 իբրու յերկարէ թիւ ժամանակաց նորա:  
 Հսկումն որ ծանր է ամենայն ումեք,  
 յոյժ թեթեւ առ նոսա:  
 5 Փեսաւէրք էք դուք, որք հրաւիրեցայք ի հարսանիս փեսային.  
 որ ոչ վախճանի.  
 Հալածեսցուք զքուն ի բրաց մերոց,  
 աւրհնութեամբ շրթանց մերոց.  
 2ի եթէ անդ ուրախ լինին ուրախութիւն  
 որ տայ զեղջ ոգւոց.  
 10 Ո՞րչափ եւս ուրախ լինիցին աստ ուրախութիւն,  
 որ հարիւրապատիկ ժողովէ զսերմն իւր:  
 Եւ զի անդ բարբառք փողոց,  
 աստ քնարք սաղմոսաց:  
 Անդ բարբառք նզովեալք չարին,  
 15 եւ աստ աւրհնութիւնք Աստուծոյ  
 Անդ երկրորդեն զկարիս ատելիս,  
 զոր զործէ ցանկութիւն ի մարդկութիւնս,  
 Աստ երկրորդեն զկարիս օրհնեալս,  
 զոր կրեաց տէր եւ ծառայք իւր.  
 2ի եթէ ի ձեռն փողոյ եւ քնարի  
 20 բառնան զքուն յաչաց մարդկան:  
 Եւ այն որ յամենայնէն ապստամբ է,  
 զաւղանջիւն ծնծղայիցն ցրէ զնա.

Ձեռագիրք Ե (Էջմիածին, Թ. 821), Թղ. 1ա:  
 Ե վիեննա, Թ. 257, Թ. 257, Թղ. 51ա:  
 Դ վիեննա Կիւ տպագրութիւն:  
 Խորագիրն եւ սկիզբը կը պակսին Ե ձեռագրին եւ անկէ յառաջագայտ օրինակներու  
 մէջ: Բնագիր առնուած է Ե:  
 1 Դ թէ փոխ. Թիւ: — 8 գայ, ուղղելի թերեւս տայ: — 10 Դ ուրախութեամբ: —  
 14 Դ բարբառքեալ փիս. բարբառք: — 20 Դ փողոց: — 22 Դ յամենայնէն ապստամբէ: —  
 23 Դ զօղայիցն:

Աստ զի հնչէ հոգի սրբութեան  
 25 Ի բերան Դաւթի քնարի իւրոյ,  
 Քանի՛ եւս թաղաւորեսցէ ի մեզ արթնութիւն,  
 զի զարութեամբ բանից նորա իմաստնասցուք:  
 Քուն հալածեալ ի խողուցն պարտի  
 30 եւ լիտութիւն յաղթեաց նմա.  
 Քանի՛ եւս յաղթեսցէ պարկեշտութիւն:  
 Փեսայ ներքին ուրախ լինի ի հսկման  
 հակառակ սգոյ.  
 Փեսայն վերին ուրախ լինի ընդ յստակ հսկումն  
 սրբոց սգացելոց:  
 35 Որ պարտի ի ծանրութենէ այսր քնոյ անդամոց,  
 Ժամանակեան փեսաւերաւ կշտամբի.  
 զի հալածեալ է քուն յաչաց նորա:  
 Արդ արթնութիւն առանց վարձու,  
 եւ հսկումն առանց խոստման.  
 40 Հսկման մերում հանդերձեալ է փառք,  
 եւ դրախտ փափկութեան խոստացեալ է:  
 Թէ յայնմ հսկման ցնծութիւն է,  
 ահա պարկեշտութիւն յայսմ հսկման:  
 45 Եւ զի լի ամենայն փրատու է այն,  
 այլ եւ հոծեալ է սահիւք:  
 Այն հսկումն անցանէ, եղբարք,  
 եւ պահեալ են ամենայն ներկուածք իւր,  
 50 Եւ այս հսկումն խափանի  
 եւ մնայ գանձ կենաց իւրոց:  
 Մեղք ծածուկք, որ ժողովեցան ի հսկման  
 Ժամանակեան փեսայից,  
 Առակեսցեն գնոսա ի մեծի ծագման  
 Որդւոյն Աստուծոյ փեսայի յաւիտենից:  
 55 Ձի անդ ամենայն ոք պատրաստի  
 զայթակղեցուցանել զայն, որ լսէն նմա.  
 Աստ պատրաստեալ է ամենայն ոք  
 աւգնել այնմ որ լսէն նմա.  
 Անդ ամենայն ոք զերեսս իւր ցուցանէ  
 60 ընկերի իւրում ի փրատել.  
 Աստ ահա ի ձեռն քողոյ  
 զգուշացեալ են եղբարք միմեանց:  
 Նորա կոչին զցանկութիւն յինքեանս  
 լրովն որ մտանէ յականջս նոցա.

52 DE առարկէ. ուղղեցի առակեսցեն, իմացիր նշտակեսցեն:

Աստ լսեն զբարբառ Հոգւոյն,  
 որ սրբէն զմիտս նոցա:  
 65 Անդ ամենայն ոք պնդանայ մեղանչել  
 ընկերի իւրում,  
 Աստ ամենայն ոք ժրանայ շահել  
 զանձն եւ զընկեր իւր:  
 70 Անդ ի խաղ եւ ի ծաղր երթան,  
 աստ ի լալ եւ ի սուգ գան.  
 Չպարտիսն, զոր ժողովեցին անդ,  
 այնու հսկմամբ քաւեն.  
 Եթէ հսկումն որ այսպիսի փրատուք լի է,  
 75 սիրելի է եւ թեթեւ.  
 Հսկումնս մեր բազմաշահ  
 Քանի՛ եւս զգուեսցի ի զուարթնոց:  
 Անցուք մեզ աւերինակ բարի յայնմ լիտի հսկմանէ.  
 Արթնութեամբ միմեանց նմանեսցուք  
 80 եւ աւտարասցուք ի խորհրդոց նոցա:  
 Եւ զի նման են խորհուրդք նոցա բարբառոցն,  
 որ անկանին յականջս նոցա,  
 նմանեսցին խորհուրդք մեր  
 բարբառոց Հոգւոյն զոր լուաք:  
 85 Խափանեցաւ խաղն եւ կայ փրատն իւր.  
 անց հսկումն եւ կայ անաւրէնութիւնն իւր.  
 Մեռան ասողք եւ լսողք,  
 եւ պահեալ է դատաստանն ահեղ ատենին:  
 Մի եմք աստ եւ անդ եւ չեմք հաւասար.  
 90 բայց աստ տաղալիտ եւ վհատող մտաւք.  
 Ձի ինչ որ անաւգուտ է,  
 թեթեւ է առնելեաց իւրոց:  
 Եւ ամենայն ինչ որ լինի յուսով,  
 վատտակով կատարէ զայն մարդ.  
 95 Ձի ստիպէ չարն եւ ճեպէ ի հսկումն,  
 որ մեղանչէ հսկողաց.  
 Նոյնպէս անդաստէ զայնոսիկ,  
 որ հսկեն վասն աւգտի:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

82 E անգանին: — 87 E ասուղք եւ լուաք: — 90 D տաղական: